

## **ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՀՈՒՐՋ**

Շուկայական հարաբերությունների արմատավորման արդի փուլում ռազմավարական նշանակություն ունեցող խնդիրներ են համարվում կայուն տնտեսական աճի ապահովումը, արդյունավետ տնտեսության ձևավորումը, մրցակցության ըստ ամենայնի զարգացումը և զբաղվածության ընդլայնումը: Նշված խնդրի հիմնովին լուծումն անկարելի է պատկերացնել առանց փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) համակարգի կայացման և հետագա զարգացման ու դրա պետական կարգավորման խելամիտ քաղաքականության մշակման և իրականացման:

Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական կարգավորման ուղղվածությունը համազգեստ է այս ոլորտում ինչպես որոշ դրական տեղաշարժերի բացահայտմանը, այնպես էլ ՓՄՁ սուբյեկտների արտադրանքի (ծառայությունների) աճի տեմպերի որոշակի դանդաղմանը, դրանց գործունեության արդյունավետության նվազմանը: Ասվածը կարելի է փաստել նրանով, որ Հայաստանում ՓՄՁ զարգացման ինդեքսը՝ հաշվարկված ՄԱԿ-ի կողմից սահմանված մեթոդաբանությամբ, 2006թ. կազմել է 237.2, որը 2002 թ. համեմատ ավելացել է ավելի քան 4 անգամ: Մինչդեռ, եթե 2002-2005թթ. ՀՆԱ-ի մեջ ՓՄՁ ոլորտի տեսակարար կշռի աճի միջին տարեկան տեմպը կազմում էր գրեթե 5%, 2006թ. աճի տեմպը կրճատվեց մինչև 1.3%: 2002-2006թթ. երկրում զբաղվածների ընդհանուր թվաքանակում ՓՄՁ սուբյեկտներում զբաղվածների թվաքանակի մասնաբաժնի աճի տեմպը գերազանցեց ՀՆԱ-ի մեջ ՓՄՁ ոլորտի տեսակարար կշռի հարաբերական ավելացումը<sup>1</sup>, ինչի արդյունքում այս ոլորտում աշխատանքի արտադրողականությունը նվազեց 6%-ով երկրի մասշտաբով նույնաճուն ցուցանիշի համեմատ:

Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական կարգավորման ողջ ժամանակաշրջանը պայմանականորեն կարելի է բաժանել 8 փուլի:

Առաջին փուլը, թերևս, սկզբնավորվեց դեռևս 1986 թվականին «Անհատական աշխատանքային գործունեության մասին» խորհրդային օրենքի ընդունմամբ, որով, ըստ էության, պաշտոտնապես թույլ տրվեց (Հայաստանի խորհրդայնացումից հետո առաջին անգամ) բոլոր ցանկացող ֆիզիկական անձանց զբաղվել թեև անհատական, բայց մասնավոր բիզնեսով: Այս իրավական կարգավորմամբ փաստորեն ստեղծվեց փոքր ձեռնարկատիրության կարևոր սուբյեկտի՝ անհատ ձեռնարկատիրոջ ինստիտուտը, ինչի վրա հետագայում խարսխվեցին անհատ ձեռնարկատիրոջ մասին օրենսդրության ձևավորումը և զարգացումը:

Երկրորդ փուլի սկիզբը կարելի է համարել 1988 թվականը, երբ առաջին անգամ օրինականացվեց կոոպերատիվների ձևով իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մասնավոր ձեռնարկություն ստեղծելու հնարավորությունը: Ընդամենը, իրենց չափերով կոոպերատիվները ճնշող մեծամասնությամբ փոքր կամ միջին ձեռնարկություններ էին:

Երրորդ փուլը շաղկապված է 1990 թվականին խորհրդային կառավարության ընդունած «Փոքր ձեռնարկությունների ստեղծման և զարգացման միջոցառումների մասին» հայտնի որոշման հետ, որով իրավունք ընձեռվեց ստեղծել սեփականության ցանկացած ձևի (այդ թվում՝ անհատական, կոլեկտիվ և խառը) հիման վրա փոքր ձեռնարկություններ, որոնք կարող են

<sup>1</sup> <http://www.smednc.am/>.

տնտեսության բոլոր ճյուղերում և ոլորտներում իրականացնել օրենսդրությամբ չարգելված ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակները<sup>1</sup>։ Հարկ է արձանագրել, որ նշված որոշմամբ սահմանվում էին փոքր ձեռնարկությունների որոշման չափանիշերը՝ աշխատողների սահմանային թվաքանակները ըստ ոլորտների, ինչպես նաև հետագայում ընդունված հարկային օրենքներով հանդերձ՝ այն ժամանակների համար բավականին լիբերալ հարկային ռեժիմն ուր ստեղծվող փոքր ձեռնարկությունների համար։ Մասնավորապես, վերջիններս, բացի կոոպերատիվներից, իրենց գործունեության առաջին 2 տարում ազատվում էին շահույթից (եկամտից) բյուջե կատարվող բոլոր վճարումներից, եթե դրանք չեն ստեղծվել ի հաշիվ գործող ձեռնարկությունների վերականգնելու համար։

Չորրորդ փուլը նշանավորվում է արդեն անկախ Հայաստանի կառավարության՝ 1991թ. «Փոքր ձեռնարկությունների ստեղծման և զարգացման մասին» որոշման ընդունմամբ<sup>2</sup>, որով սահմանվում էին փոքր ձեռնարկությունների կարգավիճակի հատկորոշման չափանիշ համարվող և նախորդ փուլի որոշմամբ ընդունվածից էապես չտարբերվող՝ աշխատողների սահմանային թվաքանակները, ինչպես նաև փոքր ձեռնարկությունների ստեղծման, պետական գրանցման, գործունեության իրականացման, հարկման կարգը։ Մասնավորապես, նոր ստեղծված փոքր ձեռնարկությունները, բացի կոոպերատիվների հիման վրա ստեղծվածներից և պետական ձեռնարկություններից ու կազմակերպություններից վերականգնվողներից, իրենց գործունեության առաջին տարում ազատվում էին շահույթից բյուջե կատարվող հատկացումներից, իսկ երկրորդ տարում կատարում էին այդ հատկացումների 50%-ը։ Ինչպես երևում է, այս որոշմամբ փոքր ձեռնարկությունների համար ամրագրվում էր հարկման ավելի նվազ լիբերալ մեխանիզմ, քան երրորդ փուլում նշվածն էր։ Պետական կարգավորման այս փուլին կարելի է դասել նաև «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» 1992թ. ընդունված ՀՀ օրենքը<sup>3</sup>, որում գրեթե մույնությամբ սահմանված էին փոքր ձեռնարկությունների հայտանիշ հանդիսացող աշխատատեղերի սահմանային քանակները։

Հինգերորդ փուլը ներառում է 1992-1998թթ. ժամանակահատվածը, երբ գործում էր «Շահութահարկի մասին» ՀՀ առաջին օրենքը<sup>4</sup>, որով բոլոր (այդ թվում՝ փոքր, միջին և խոշոր) նոր ստեղծվող ձեռնարկություններն իրենց գործունեության առաջին 2 տարում ազատվում են շահութահարկից, եթե դրանք չեն ստեղծվել ի հաշիվ գործող ձեռնարկությունների վերականգնելու համար կամ լուծարման։ Ինչպես տեսնում ենք, փոքր, միջին և խոշոր ձեռնարկությունները դրվում էին մույն հարթության վրա և, հետևաբար, փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների նկատմամբ չէր նախատեսվում առավել բարենպաստ հարկային քաղաքականության իրականացում։

Սակայն այս ամենին հաջորդեց վեցերորդ փուլը, երբ 1998թ. «Շահութահարկի մասին» ՀՀ նոր օրենքի ընդունմամբ վերացվեցին նոր ստեղծվող, այդ թվում՝ փոքր ձեռնարկությունների համար սահմանված վերոհիշյալ հարկային արտոնությունները։

Փոքր և միջին ձեռնարկատիրության համակարգի պետական կարգավորման 7-րդ փուլի սկիզբը պետք է համարել «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի՝ 2000 թվականին ընդունումը<sup>5</sup>, որով, մասնավորապես, 2-4 ամսան (կախված ոլորտից) կրճատվում են փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների աշխատողների թվաքանակները 4-րդ փուլի համեմատ, ինչը չի կարելի չդիտել որպես վերոհիշյալ համակարգի պետական կարգավորման վարչական մեթոդների էական կոշտացում։ Այս փուլին է վերաբերում նաև մույն տարում «Պարգևգրված հարկի մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որով ձեռնարկա-

<sup>1</sup> Экономика и жизнь, 1990, N33, с.4.

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետություն, 1991, 22 հունվարի։

<sup>3</sup> <http://www.laws.am/>.

<sup>4</sup> Նույն տեղում։

<sup>5</sup> <http://www.laws.am/>.

տիրության սուբյեկտների խիստ սահմանափակ շրջանակի համար ավելացված արժեքի հարկի և շահութահարկի (եկամտահարկի) փոխարեն սահմանվում էին, ինչպես հայտնի է, արտադրանքի (ծառայությունների) իրացման շրջանառության ծավալի նկատմամբ պարզեցված հարկի դրույքաչափեր՝ ըստ գործունեության ոլորտների:

Եվ, վերջապես, ութերորդ փուլը սկսվում է 2009 թվականի հունվարի 1-ից, երբ ուժը կորցրած է ճանաչվում «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքը, և համապատասխան հարկային օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու հիման վրա սահմանվում է նոր հարկային ռեժիմ փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների համար:

Անհրաժեշտ է նշել այն իրողությունը, որ ներկայումս գործող «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը պարունակում է ոչ միայն ՓՄՁ խրախուսման և պետական աջակցության մասին վերացական դրույթներ, այլև տնտեսագիտորեն չհիմնավորված սահմանումներ և ձևակերպումներ: Այսպես, ըստ այդ օրենքի, գոյություն ունեն ՓՄՁ 3 առանձին սուբյեկտներ՝ գերփոքր, փոքր և միջին, ինչն ուղղակիորեն հակասում է նույն օրենքի վերնագրին, որտեղ նշվում է միմյանց փոքր և միջին ձեռնարկատիրության մասին, ինչպես նաև տնտեսագիտական և անգամ լեզվական առումով այն պարզ տրամաբանությանը, ըստ որի գերփոքրը չի կարող չհամարվել փոքրի մի տարատեսակ: Ուստի առաջարկում ենք այս օրենքում տարբերակել ՓՄՁ սուբյեկտների ոչ թե 3, այլ 2 տեսակ՝ փոքր, այդ թվում՝ գերփոքր և միջին:

Բացի այդ, համաձայն նույն օրենքի, ստացվում է, որ փոքր ձեռնարկատիրության սուբյեկտը միջին ձեռնարկատիրության մի տեսակ է, քանի որ, օրինակ, 40 աշխատող ունեցող սուբյեկտը, ըստ այդ օրենքի, կհամարվի և՛ փոքր ձեռնարկություն (չի գերազանցում 50 աշխատողը), և՛ միջին ձեռնարկություն (չի գերազանցում 100-ը): Հետևապես, անհրաժեշտ է օրենքի 2-րդ հոդվածում կատարել վերոհիշյալից բխող փոփոխություն և ձևակերպել, որ փոքր են համարվում, ասենք, արդյունաբերության և նյութական արտադրության այլ ճյուղերում, մինչև 50, այդ թվում՝ գերփոքր են՝ մինչև 5 աշխատող ունեցող ձեռնարկատիրության սուբյեկտները, իսկ միջին են համարվում այն տնտեսավարող սուբյեկտները, որոնց աշխատողների թվաքանակը կազմում է 51-ից մինչև 100 մարդ ներառյալ:

Հարկ է արձանագրել այն փաստը, որ արդի ժամանակահատվածում ՓՄՁ սուբյեկտների պետական կարգավորման գործընթացը բնութագրվում է այդ սուբյեկտների որոշման տարբեր և իրական կյանքում հաճախ փոխհակասող հայտանիշների առկայությամբ: Իրոք, եթե «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով այդպիսի հայտանիշ է հռչակվում աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, ապա հարկային օրենսդրությամբ՝ արտադրանքի (ծառայությունների) իրացման շրջանառության ծավալը: Եվ քանի որ ՓՄՁ նոր սուբյեկտների ստեղծման գլխավոր շարժառիթը ՓՄՁ ոլորտի համար սահմանված որոշակի արտոնություններից օգտվելու ձգտումն է, այդ սուբյեկտների համար որպես ՓՄՁ սուբյեկտների որոշման իրական հայտանիշ է հարկային օրենսդրությամբ սահմանված հայտանիշը, քանզի հենց վերջինով է պայմանավորված նշված արտոնություններից օգտվելու նրանց իրավունքը: Ուստի, ակնբախ է դառնում այն իրողությունը, որ ՓՄՁ սուբյեկտների համար վերոհիշյալ օրենքով սահմանված աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, որպես ՓՄՁ սուբյեկտների որոշման հայտանիշ, կրում է բացարձակապես ձևական բնույթ:

Ինչպես հայտնի է, «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքով համանուն հարկի վճարողներ և, հետևապես, ՓՄՁ սուբյեկտներ էին, այն տնտեսավարող սուբյեկտները (SU), որոնց իրացման տարեկան շրջանառության ծավալը չէր գերազանցում 50 մլն դրամը: Իսկ ներկայումս, ըստ էության, նշված սուբյեկտներ են համարվում և ազատվում ավելացված արժեքի հարկից այն SU, որոնց արտադրանքի (ծառայությունների) իրացման տարեկան շրջանառությունը չի գերազանցում 58,350 մլն դրամը: Մի կողմ թողնելով վերջին թվի ընտրության հիմնավորվածու-

թյան հարցը՝ նշենք, որ միայն այդ պարագայում ՏՄ կարող են վճարել 20% դրույքաչափով շահութահարկ իրենց համախառն եկամտի ոչ պակաս քան 2%-ի և ոչ ավելի քան 10%-ի չափով: Փոքր և միջին բիզնեսի համար նոր գործող հարկային ռեժիմի վերլուծությունը բերում է այն եզրահանգման, որ՝

ա) նոր հարկային մեխանիզմը որոշակիորեն առավել բարդացված է, քան նախորդը, հակառակ բարձրաստիճան պաշտոնյաների՝ ՓՄՁ սուբյեկտների համար հարկային համակարգը հնարավորինս պարզեցնելու անհրաժեշտության մասին պնդումների,

բ) լրջորեն խմաստավորված չէր պարզեցված հարկի վերացումը և այս նոր հարկային համակարգի կիրարկումը, առավել ևս, որ ըստ այդմ շահութահարկի վերոհիշյալ 2-10% «միջանցքի» սահմանումը գործելու է ընդամենը մեկ տարի: Եթե այս նոր հարկային դաշտի ձևավորման ջատագովները կարծում են, որ մեկ տարին բավական է՝ փոքր և միջին բիզնեսի սուբյեկտներին «ստվերից» օրինական դաշտ բերելու համար, որի պարագայում, ինչպես իրենք են կարծում, կարելի է հրաժարվել նշված «միջանցքից», ապա դա բացահայտ մոլորություն է,

գ) եթե կարելի է հասկանալ (բայց ոչ ընդունել) համախառն եկամտի 2% նվազագույն սահմանի ընտրությունը, որը բխում էր ՓՄՁ սուբյեկտների համախառն եկամտում վճարված պարզեցված հարկի միջինը 2-3% լինելու փաստից, ապա վերոբերյալ «միջանցքի» առավելագույն 10%-ի սահմանումը թեև առաջին հայացքից կարող է համարվել շահույթի ծավալի աճը խթանող գործոն, սակայն իրականում որևէ դրական արդյունքի չի հանգեցնի: Ասվածը կարելի է փաստարկել նախ այն իրողությամբ, որ, բնականաբար, իրացման շրջանառության ծավալի աճի հաշվին շահութահարկի գերազանցելը նշված «միջանցքի» առավելագույն 10%-ի սահմանն անհնար է, քանզի շահութահարկի ավելացմանը համամասնորեն կաճի այդ շրջանառության ծավալի մեծացմամբ պայմանավորված համախառն եկամտի 10%-անոց շեմը: Եվ երկրորդը, փոքր և միջին բիզնեսի տնտեսավարող սուբյեկտները չեն կարողանա իրենց ընթացիկ ծախսերի կրճատման հաշվին միջինն ավելի քան հինգ անգամ (10% / 2%) ավելացնել իրենց հարկվող շահույթը (առանց իրացման շրջանառության աճի), որպեսզի դրա հիման վրա շահութահարկի հաշվարկային մեծությունը գերազանցի համախառն եկամտի 10%-ը, և հետևապես այդ գերազանցմանը համընթաց առավել կրճատվի շահութահարկի փաստացի դրույքաչափը: Մեր հաշվարկներով այն ձեռնարկություններում, որտեղ համախառն եկամուտը եապես չի տարբերվում իրացման շրջանառության ծավալից հաշվարկային շահութահարկի գերազանցելը «միջանցքի» 10%-ը կարող է ապահովվել արտադրանքի շահութաբերության ավելի քան 50%-անոց մակարդակի ձեռքբերման դեպքում, ինչը շուկայում, որպես կանոն, գերիշխող դիրք չունեցող ՓՄՁ սուբյեկտների համար գրեթե անիրականանալի խնդիր է:

Այսպիսով, թեև ներկայումս ուժը կորցրած է ճանաչվել «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքը, սակայն դրա գաղափարախոսության հիմնաքարը, այն է՝ արտադրանքի (ծառայությունների) իրացման շրջանառության ցուցանիշի ընդունումը որպես ՓՄՁ սուբյեկտների որոշման և, հետևապես, դրանց հարկային և այլ արտոնություններ տրամադրելու հայտանիշ, ավադ, պահպանվել է համապատասխան հարկային օրենքներում: Մեր կարծիքով հիմնավորված չէ ՓՄՁ սուբյեկտների որոշման հայտանիշ համարել ցանկացած տնտեսավարող սուբյեկտի գործունեության արդյունքային ցուցանիշը՝ արտադրանքի (ծառայությունների) իրացման շրջանառության ծավալը, քանի որ մեթոդաբանական և գործնական առումով հիմնագուրկ է ընդհանրապես սահմանափակել որևէ գործունեության արդյունքային ցուցանիշները: Ուստի, ճիշտ կլիներ որպես նման հայտանիշ ճանաչել տվյալ տնտեսավարող սուբյեկտի աշխատատեղերի սահմանային քանակը, որը և հիմք կծառայեր ՓՄՁ ոլորտի համար սահմանված հարկային, վարկային և այլ արտոնություններից օգտվելու համար:

Օրախնդիր կարելի է դիտել ՓՄՁ սուբյեկտների համար լիցենզավորման և պետական գրանցման առավել բարենպաստ պայմանների ստեղծմանն ուղղված գործնական քայլերի

իրականացումը: Մասնավորապես, նպատակահարմար կլիներ ՓՄՁ սուբյեկտների կողմից լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար լիցենզիաներ տրամադրել պարզ ընթացակարգով, բացառությամբ օրենքով սահմանված այն դեպքերի, երբ տվյալ տնտեսավարող սուբյեկտը (կախված իր գործունեության ոլորտից կամ անկախ դրանից) չի կարող համարվել ՓՄՁ սուբյեկտ, անգամ եթե այն համապատասխանում է ՓՄՁ սուբյեկտների որոշման հայտանիշ համարվող աշխատողների կամ աշխատատեղերի սահմանային թվաքանակին: Ընդ որում, պարզ ընթացակարգով լիցենզիա ստացած տնտեսավարող սուբյեկտն իր ՓՄՁ սուբյեկտի կարգավիճակը պետք է պահպանի լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման ողջ ժամանակահատվածում, հակառակ պարագայում նա զրկվում է լիցենզիայից և վճարում օրենսդրությամբ սահմանված չափով տուգանք՝ նշված պայմանը խախտելու համար:

Վերոհիշյալ համատեքստում հիմնավորված կլիներ նաև կրկնակի կրճատել նոր ստեղծվող ՓՄՁ սուբյեկտների պետական գրանցման և դրանց գործունեության լիցենզավորման համար վճարվող պետական տուրքի գործող չափերը, ինչը, անշուշտ էականորեն չի ազդի պետական բյուջեի եկամտային մասի վրա, սակայն նշանակալիորեն կխրախուսի ՓՄՁ սուբյեկտների և հատկապես փոքր, այդ թվում՝ գերփոքր ձեռնարկատիրության սուբյեկտների ստեղծման և գործունեության ծավալման գործընթացները:

## **ՄԱՆՈՒԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

*ՀՊԱՀ Ֆինանսներ և վարկ ամբիոնի ասիստենտ*

### **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Շուկայական տնտեսության անցման գործընթացում ՀՀ-ում ակնկալվում էր, որ տնտեսավարման նոր պայմաններին համահունչ տնտեսավարող սուբյեկտների գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների հիմնական աղբյուր կդառնան իրենց սեփական միջոցները, իսկ դրանց պակասի դեպքում նրանք կարող էին դիմել առևտրային բանկերին, ունիվերսալ վարկային կազմակերպություններին՝ ակնկալելով դրամական միջոցներ՝ վերադարձելիության և առևտրային սկզբունքներով: Սակայն գյուղացիական տնտեսությունների և այլ արտադրական կազմակերպությունների ցածր եկամտաբերությունը հնարավորություն չընձեռեց վերարտադրության գործընթացը կազմակերպել սեփական միջոցների հաշվին, իսկ առևտրային բանկերի վարկային միջոցներն անհասանելի դարձան գյուղացիական տնտեսությունների մեծ մասի համար:

1990-ական թվականներին ՀՀ ՀՆԱ-ում գյուղատնտեսության մասնաբաժինն ավելացավ՝ հասնելով 40%-ի<sup>1</sup>: Ներկայումս նրա տեսակարար կշիռը կազմում է 13.8%, իսկ ամբողջ ագրոպարենային համակարգում ձևավորված արդյունքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմում է 21.9%<sup>2</sup>: Ներկայումս Հայաստանի գյուղատնտեսությունը բավականաչափ աղքատ ոլորտ է, իր գոյատևմանն ուղղված վարչաօրհանային տնտեսությունից անցումային փուլում գտնվող ոլորտի դասական օրինակ: Հարկ ենք համարում նշել այն կարևոր հանգամանքը, որ ֆերմերների մի

<sup>1</sup> «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագիր», Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ, Հայաստանի Հանրապետություն, 2004 թվական:

<sup>2</sup> «Հայաստանի գյուղատնտեսությունը», Երևան, 2008 թվական: